12/159-Դ

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

«22» 12 2022թ.

ք. Գյումրի

«ՀՀ Արտակարգ Իրավիճակների Նախարարություն» այսուհետ՝ Պատվիրատու, ի դեմս գլխավոր քարտուղար Լ.Միրզախանյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա (պետական միասնական գրանցամատյանից քաղվածը առ 18.11.2021թ.), մի կողմից և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Շիրակի ԳԳՄ» այսուհետ Կատարող, ի դեմս տնօրեն Ա.Գալստյանի, որը գործում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 25.10.2022թ. N 01/15.2/3232-2022 լիազորագրի հիման վրա, մյուս կողմից, այսուհետ համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ Պայմանագիր, հետևյալի մասին.

### 1.Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով մատուցել.

Շիրակի մարզի Աշոցք համայնք գ.Աշոցք 9-րդ փող. թիվ 2/1 հասցեում գտնվող Արտակարգ իրավիճակների նախարարության հրշեջ-ջոկատի շենքի գազիֆիկացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման ծառայություն(ներ)ը, այսուհետ՝ Ծառայություն, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Ծառայության համար:

1.2. Ծառայությունը կամ դրա մասը համարվում է կատարված Պատվիրատուի լիազոր ներկայացուցչի կողմից համապատասխան հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո:

### 2.Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից Ծառայության մատուցման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.2. Մատուցված Ծառայությունում թերություններ հայտնաբերելու դեպքում Կատարողից պահանջել __(15)-օրյա ժամկետում անհատույց վերացնել դրանք և հատուցել Պատվիրատուին դրանով հասցված վնասները,

2.1.3. Մատուցված Ծառայությունն ընդունելուց հետո՝ 10 ժամկետի ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում, պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը,

2.1.4. մինչև հանձնման-ընդունման ակտը ստորագրելը ցանկացած ժամանակ հրաժարվել Պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով մինչև Պայմանագիրը կատարելուց Պատվիրատուի հրաժարվելու վերաբերյալ ծանուցում ստանալու պահը մատուցած Ծառայությանը համարժեք գին:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Պայմանավորված գինը Պատվիրատուն Կատարողին վճարում է նախապես կանխավճարային կարգով (20) օրացուցային օրվա ընթացքում.

2.2.2. Մատուցված Ծառայությունում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Ծառայությունը մատուցել Պայմանագրի 4-րդ կետով սահմանված ժամկետներում,

2.3.2. Ծառայությունը մատուցել առաջադրանքին, նորմատիվ իրավական ակտերի պահանջներին և Պայմանագրին համապատասխան, պատշաճ որակով, իր ուժերով, նյութերով, սարքերով, բացառությամբ այն դեպքերի, երբ նյութերը կտրամադրվեն Պատվիրատուի կողմից,

2.3.3. Ծառայությունը մատուցելուց հետո, Պայմանագրի 2.1.3. կետում նշված ժամկետի ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում, Պատվիրատուի պահանջով __(15)-օրյա ժամկետում անհատույց վերացնել բոլոր բացահայտված թերությունները,

2.4. Կատարողը իրավունք ունի՝

2.4.1. Պատվիրատուի կողմից ՀՀ օրենսդրությամբ և/կամ Պայմանագրով սահմանված իր պարտականությունները չկատարելու դեպքում հրաժարվել Ծառայությունը մատուցելուց,

2.4.2. Պատվիրատուի համաձայնությամբ Ծառայությունը մատուցել Պայմանագրով սահմանված ժամկետից շուտ:

### 3.Ծառայության գինը և վարձատրության կարգը

3.1. Պայմանագրով մատուցման ենթակա Ծառայության գինը սահմանվում է 377560 (երեք հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր վաթսուն) դրամ ներառյալ ԱԱՀ:

3.2. Պատվիրատուն Պայմանագրով սահմանված վճարումները կատարում է անկանխիկ՝ բանկային փոխանցմամբ:

## 4. Ծառայությունը մատուցելու ժամկետները

4.1. Ծառայության մատուցման սկզբնական ժամկետն է 22. 12 2022թ., իսկ վերջնական ժամկետը 30 06 2023թ.:

Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման ինչպես սկզբնական, այնպես էլ վերջնական ժամկետները խախտելու համար:

4.2. Պայմանագրի 4.1. կետում նշված Ծառայության մատուցման սկզբնական և վերջնական ժամկետները կարող են փոփոխվել Պայմանագրում նախատեսված դեպքերում ու կարգով:

## 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Ծառայության մատուցման ժամկետի(ների) խախտման համար Պատվիրատուն իրավունք ունի պահանջելու Կատարողից վճարելու տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ Ծառայության գնի 0,1%-ի չափով:

5.2. Պատվիրատուի կողմից պայմանավորված գինը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Կատարողն իրավունք ունի պահանջելու Պատվիրատուից վճարելու տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ Ծառայության գնի 0,1%-ի չափով:

5.3. Պայմանագրով իրենց պարտականությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 6.Վեճերի լուծման կարգը

6.1. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

6.2. Պայմանագրի 6.1. կետի պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

## 7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և դադարում է պարտականությունների պատշաճ կատարմամբ:

7.2. Պայմանագրում բոլոր փոփոխություններն ու լրացումները կատարվում են Կողմերի գրավոր համաձայնությամբ:

7.3. Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7.4. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

## 7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| «ՀՀ Արտակարգ Իրավիճակների Նախարարություն» | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Շիրակի» ԳԳՄ |
| Հաշվառման հասցե՝ք.Երևան Դավիթաշեն 4-րդ թաղ. Ա.Սամիկոնյան փող. թիվ 109/8 | Իրավաբանական հասցե՝ ք.Երևան Թբիլիսյան խճ.-43 |
| Գտնվելու վայր՝ համայնք Աշոցք գ.Աշոցք 9-րդ փող. թիվ 2/1 | Գտնվելու վայր – ք.Գյումրի Չայկովսկի-2 |
| ՀՎՀՀ 00153247 | ՀՎՀՀ 00046317 |
| Հ/հ 900011001352 | Հ/հ 2478919451950010 |
| Բանկ – Ֆին.նախարար. գործառն. վարչ. . | Բանկ - «Արդշինբանկ» ՓԲԸ Շիրակ մասնաճյուղ |
| հեռ. (093) 98-92-58 | հեռ. (0312) 5-28-06 |
| Գլխավոր քարտուղար | Տնօրեն Ա.Գալստյան |
| Միրզախանյան Լիլիթ | |